

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՃԱՆԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

19 ՄԱՐՏԻ 2014թ.

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 77.1-77.6-րդ հոդվածների պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզպետի 2014 թվականի մարտի 17-ի N36-Ա որոշումը, ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի աշխատանքային խմբի կողմից (խմբի ղեկավար ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Ս.Ավետիսյան) ՀՀ Սյունիքի մարզի Աճանանի գյուղապետարանում 2014 թվականի մարտի 19-ին իրականացվեց վարչական հսկողություն հետևյալ բնագավառներում՝

Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների իրականացում, քաղաքաշինություն, հողօգտագործում, ընդերքօգտագործում, բնապահպանություն, առևտուր և ծառայություններ:

1. Վարչական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը՝ կից հավելվածով ներկայացված հայտնաբերված խախտումների, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ առաջարկությունների, ինչպես նաև հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների վերաբերյալ:

2. Առաջարկությունները նշված ժամկետում չկատարելու դեպքում այն կբողոքարկվի դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

3. Աճանան գյուղական համայնքի ղեկավարը վարչական հսկողության արդյունքների և վարչական հսկողությունն իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ առարկություններ չի ներկայացրել:

4. Արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկ օրինակը հանձնվում է ՀՀ Սյունիքի մարզպետարանին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է Աճանան գյուղական համայնքի ղեկավարին:

ՀՀ Սյունիքի մարզի համայնքներում վարչական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի ղեկավար՝

Ս.Ավետիսյան

ՀՀ Սյունիքի մարզի Աճանան գյուղական համայնքի ղեկավար՝

Վ.Ավետիսյան



Հավելված

ՀՀ Սյունիքի մարզի Աճառնան գյուղական համայնքում
իրականացված վարչական հսկողության արդյունքների
ամփոփման վերաբերյալ
19-03-2014թ. N1 արձանագրության

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՃԱՌՆԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ
ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՀԱՅՏԱՐՎԵՐՎԱԾ ԽԱՄՏՈՒՆՆԵՐԸ

Դրույթների անվանումը	Պահպանված է	Թերի է պահպանված	Պահպանված չէ	Հայտնաբերված խախտումները	Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ	Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները
1	2	3	4	5	6	7
Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու վերաբերյալ որոշման արկայություն	X	X	Պահպանված չէ	Խախտվել է "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 33-րդ կետով սահմանված պահանջը	Առաջարկվել է ընդունել համապատասխան որոշում	Եռամսյա ժամկետում
Համայնքի ղեկավարի որոշմամբ հաստատված աշխատակազմի գործակալության կարգի արկայություն	X	X	Պահպանված չէ	Խախտվել է "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով սահմանված պահանջը	Առաջարկվել է ընդունել համապատասխան իրավական ակտ	Երկամսյա ժամկետում
Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու վերաբերյալ համայնքի ավագանուն ներկայացված արաջարկության արկայություն	X	X	Պահպանված չէ	Խախտվել է "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 10,1-րդ կետով սահմանված պահանջը	Առաջարկվել է հանդես գալ համապատասխան արաջարկությամբ	Երկամսյա ժամկետում